ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հուլիսի 2011թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՌԴ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2011-2014ԹԹ. ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Երևան քաղաքում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել 2011թ. հուլիսի 07-ին ստորագրված ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև 2011-2014թթ. առևտրատնտեսական, գիտատեխնիկական, հումանիտար համագործակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՌԴ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2011-2014ԹԹ. ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ելնելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քաղաքների միջև երկկողմ համագործակցության անհրաժեշտությունից և հիմք ընդունելով 1997թ. հունիսի 19-ին ստորագրված “ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքի վարչակազմի մրջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին” համաձայնագիրը, նպատակ ունենալով ակտիվացնել երկկողմ կապերը, անհրաժեշտ եմ համարում վերոնշյալ ծրագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՌԴ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2011-2014ԹԹ. ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև 2011-2014թթ. առևտրատնտեսական, գիտատեխնիկական, հումանիտար համագործակցության ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության
Երևանի քաղաքապետ

Կ.Վ.Կարապետյան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Ռուսաստանի Դաշնության
Սանկտ Պետերբուրգի
նահանգապետ

Վ.Ի. Մատվիենկո

ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարանի և Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև 2011-2014թթ. առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության

№	Համատեղ միջոցառումներ և նախագծեր	Կատարման ժամկետ	Պատասխանատու կատարողներ	
			Երևանի քաղաքապետարանի կողմից	Սանկտ Պետերբուրգի քաղաքապետարանի կողմից
1	2	3	4	5
1. Առևտրատնտեսական ոլորտում համագործակցություն				
1.1	Աջակցություն Երևանի և Սանկտ Պետերբուրգի գործարար շրջանակների մասնակցությամբ առևտրատնտեսական համագործակցության հարցերով կլոր սեղանների կազմակերպմանը	2011-2014թթ.	Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, Առևտրի և սպասարկումների վարչություն, Արտաքին կապերի վարչություն, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ	Սանկտ Պետերբուրգի տնտեսական զարգացման, արդյունաբերական քաղաքականության և առևտրի կոմիտե, Սանկտ Պետերբուրգի Արտաքին կապերի կոմիտե

1	2	3	4	5
1.2	Աջակցություն Երևանի և Սանկտ Պետերբուրգի տարածքում գտնվող տնտեսվարող սուբյեկտների համագործակցությանը, գործնական շփումների ընդլայնմանը, տեղեկատվության փոխանակմանը՝ այդ թվում առաջատար տեխնոլոգիաների, առևտրի և սպասարկման ոլորտներում առկա առաջադեմ եղանակների և ձևերի վերաբերյալ	2011-2014թթ.	Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, Առևտրի և սպասարկումների վարչություն, Արտաքին կապերի վարչություն, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ	Սանկտ Պետերբուրգի տնտեսական զարգացման, արդյունաբերական քաղաքականության և առևտրի կոմիտե, Սանկտ Պետերբուրգի Արտաքին կապերի կոմիտե
1.3	Աջակցություն Սանկտ Պետերբուրգի ձեռնարկությունների արտադրանքների ներկայացմանը Երևանի ցուցահանդեսներում, Սանկտ Պետերբուրգի ցուցահանդեսներում երևանյան ձեռնարկությունների արտադրանքների ներկայացմանը, Երևանում և Սանկտ Պետերբուրգում անցկացվող միջազգային ցուցահանդեսներին մասնակցություն	2011-2014թթ.	Առևտրի և սպասարկումների վարչություն, Արտաքին կապերի վարչություն, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ	Սանկտ Պետերբուրգի տնտեսական զարգացման, արդյունաբերական քաղաքականության և առևտրի կոմիտե, Սանկտ Պետերբուրգի Արտաքին կապերի կոմիտե
1.4	Աջակցություն Սանկտ Պետերբուրգում <<Երևան>> առևտրի տան հիմնադրմանը համապատասխան գործող օրենսդրության	2011-2014թթ.	Արտաքին կապերի վարչություն, Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն	Ներդրումների և ռազմավարական նախագծերի կոմիտե Տնտեսական զարգացման, արդյունաբերական քաղաքականության և առևտրի կոմիտե Քաղաքային գույքի

1	2	3	4	5
				կառավարման կոմիտե, Սանկտ Պետերբուրգի Արտաքին կապերի կոմիտե
1.5	Համապատասխան գործող օրենսդրությանը Սանկտ Պետերբուրգում <<Երևան>> հյուրանոցի կառուցման և Երևանում՝ <<Սանկտ Պետերբուրգ>> հյուրանոցի կառուցման աջակցում	2011-2014թթ.	Արտաքին կապերի վարչություն, Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն	Ներդրումների և ռազմավարական նախագծերի կոմիտե, Քաղաքային գույքի կառավարման կոմիտե, Սանկտ Պետերբուրգի Արտաքին կապերի կոմիտե
2. Գիտատեխնիկական ոլորտում համագործակցություն				
2.1	Աջակցություն Երևանի և Սանկտ Պետերբուրգի քաղաքային տնտեսության խնդիրներին նվիրված գիտա-գործնական կոնֆերանսների կազմակերպմանը	2011-2014թթ.	Շինարարության և բարեկարգման վարչություն, Կոմունալ տնտեսության վարչություն	Սանկտ Պետերբուրգի բարեկարգման կոմիտե Սանկտ Պետերբուրգի տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման կոմիտե Էներգետիկայի և ինժեներային ապահովման գծով կոմիտե Բնակարանային կոմիտե
2.2	Երևանի և Սանկտ Պետերբուրգի միջև գիտական	2011-2014թթ.	Զարգացման և	Տնտեսական

1	2	3	4	5
	գրականության, տեղեկատվության և, սոցիալ-տնտեսական զարգացման և ռազմավարական պլանավորման հարցերով մեթոդական մշակումների փոխանակում, աջակցություն գիտական ուսումնասիրությունների հրատարակմանը		ներդրումային ծրագրերի վարչություն, <<Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն>> ՓԲԸ	զարգացման, արդյունաբերական քաղաքականության և առևտրի կոմիտե Ներդրումների և ռազմավարական նախագծերի կոմիտե Գիտության և բարձրագույն դպրոցի կոմիտե
2.3	Երևանի և Սանկտ Պետերբուրգի ռազմավարական պլանավորման սոցիալ-տնտեսական զարգացման հարցերով փոխայցելությունների կազմակերպում փորձի ուսումնասիրության նպատակով	2011-2014թթ.	Ֆինանսական Վարչություն, Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն	Տնտեսական զարգացման, արդյունաբերական քաղաքականության և առևտրի կոմիտե Ներդրումների և ռազմավարական նախագծերի կոմիտե Գիտության և բարձրագույն դպրոցի կոմիտե Սանկտ Պետերբուրգի Արտաքին կապերի կոմիտե
2.4	Տեղեկատվության փոխանակում շինարարական նոր տեխնոլոգիաների ներդրման ոլորտում, շինարարական գործունեության նորմատիվ-իրավական և մեթոդական ապահովման ոլորտում	2011-2014թթ.	Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն Շինարարության և բարեկարգման վարչություն	Շինարարության կոմիտե

1	2	3	4	5
2.5	Աջակցություն Սանկտ Պետերբուրգում Երևանի մասնագետների համար ճարտարապետության և քաղաքաշինության ոլորտներում որակավորման բարձրացման դասընթացներ և ստաժավորման կազմակերպմանը	2011-2014թթ.	Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն Շինարարության և բարեկարգման վարչություն	Քաղաքաշինության և ճարտարապետության կոմիտե Գիտության և բարձրագույն դպրոցի կոմիտե
2.6	Գործող օրենսդրությանը համապատասխան աջակցել Երևանի ներդրողների մասնակցությանը Սանկտ Պետերբուրգում հյուրանոցային շինարարության և առանձին թաղամասերի վերակառուցման ծրագրերում	2011-2014թթ.	Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն Արտաքին կապերի վարչություն	Ներդրումների և ռազմավարական նախագծերի կոմիտե
2.7	Փորձի փոխանակում քաղաքային արտակարգ փրկարարական ծառայությունների զարգացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ժամանակ արագ արձագանքման մեթոդների ոլորտում	2011-2014թթ.	Երևանի փրկարարական ծառայություն	Օրինականության, կարգուկանոնի և անվտանգության կոմիտե
2.8	Աջակցել գոծընկերային կապերի հաստատմանը Երևանի և Սանկտ Պետերբուրգի հանրակրթական հիմնարկությունների, տարրական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական հիմնարկությունների միջև, ուսանողների և դպրոցականների պատվիրակությունների փոխանակումների իրականացմանը	2011-2014թթ.	Ընդհանուր կրթության վարչություն	Գիտության և բարձրագույն դպրոցի կոմիտե Կրթության կոմիտե
2.9	Փորձի փոխանակում առարկայական օլիմպիադաների անցկացման, դպրոցականների համար գիտա-կրթական մրցույթների կազմակերպման ոլորտում	2011-2014թթ.	Հանրակրթության վարչություն	Կրթության կոմիտե
2.10	Աջակցել Երևանի ուսանողների ուսուցմանը Սանկտ Պետերբուրգի բուհերում ըստ քվոտաների, տրամադրված	2011-2014թթ.	Երևանի քաղաքապետարանի	Գիտության և բարձրագույն դպրոցի

1	2	3	4	5
	Ռուսաստանի Դաշնության Կրթության և գիտության նախարարության կողմից անվճար կրթության համար		հանրակրթության վարչություն Արտաքին կապերի վարչություն	կոմիտե
2.11	Փորձի փոխանակում շրջակա միջավայրի մոնիթորինգի ոլորտում, ինչպես նաև Երևանի և Սանկտ Պետերբուրգի կանաչապատ տարածքների պահպանման և զարգացման ոլորտում	2011-2014թթ.	Բնապահպանության վարչություն	Բնօգտագործման, շրջակա միջավայրի պահպանման և էկոլոգիական անվտանգության ապահովման կոմիտե Սանկտ Պետերբուրգի բարեկարգման կոմիտե
2.12	Փորձի փոխանակում կոշտ կենցաղային թափոնների ոչնչացման և վերամշակման համար արդյունավետ համակարգի ներդրման հարցում	2011-2014թթ.	Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, Կոմունալ տնտեսության վարչություն, Բնապահպանության վարչություն	Սանկտ Պետերբուրգի բարեկարգման կոմիտե
2.13	Աջակցել շրջակա միջավայրի պահպանմանն ու ռացիոնալ բնօգտագործմանն ուղղված թեմատիկ ցուցահանդեսների, գիտա-մեթոդական սեմինարների և կոնֆերանսների կազմակերպմանը	2011-2014թթ.	Բնապահպանության վարչություն	Բնօգտագործման, շրջակա միջավայրի պահպանման և էկոլոգիական անվտանգության ապահովման կոմիտե
2.14	Փորձի փոխանակում հատուկ պահպանությանն ենթակա բնության տարածքների ոլորտում	2011-2014թթ.	Բնապահպանության վարչություն	Բնօգտագործման, շրջակա միջավայրի պահպանման և էկոլոգիական

1	2	3	4	5
				անվտանգության ապահովման կոմիտե
2.15	Փորձի փոխանակում արդյունաբերական արտադրության մեջ էներգատնտեսող տեխնոլոգիաների մշակման և ներդրման ոլորտում	2011-2014թթ.	Բնապահպանության վարչություն	Բնօգտագործման, շրջակա միջավայրի պահպանման և էկոլոգիական անվտանգության ապահովման կոմիտե Էներգետիկայի և ինժեներային ապահովման գծով կոմիտե Տնտեսական զարգացման, արդյունաբերական քաղաքականության և առևտրի կոմիտե
2.16	Փորձի փոխանակում շրջակա միջավայրի վրա ավտոտրանսպորտի բացասական ազդեցության մակարդակի նվազեցման ոլորտում	2011-2014թթ.	Բնապահպանության վարչություն	Բնօգտագործման, շրջակա միջավայրի պահպանման և էկոլոգիական անվտանգության ապահովման կոմիտե Տրանսպորտի կոմիտե
2.17	Փորձի և տեխնոլոգիաների փոխանակում Երևանի և	2011-2014թթ.	Բնապահպանության	Սանկտ Պետերբուրգի

1	2	3	4	5
	Սանկտ Պետերբուրգի կանաչապատման ոլորտում		վարչություն	բարեկարգման կոմիտե
	3. Հումանիտար ոլորտում համագործակցություն			
3.1	Աջակցել Երևանի և Սանկտ Պետերբուրգի կրթական հիմնարկությունների ստեղծագործական կոլեկտիվների, մանկական և երիտասարդական միավորումների համագործակցությանը	2011-2014թթ.	Մշակույթի վարչություն, հանրակրթության վարչություն	Երիտասարդական քաղաքականության և հասարակական կազմակերպությունների հետ փոխազդեցության կոմիտե Կրթության կոմիտե
3.2	Աջակցել Երևանի և Սանկտ Պետերբուրգի զբոսաշրջային կազմակերպությունների և հյուրանոցային տնտեսության ներկայացուցիչների համար տեղեկատվական-գովազդային շրջայցերի կազմակերպմանը	2011-2014թթ.	Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, Երևանի քաղաքապետարանի մշակույթի վարչություն, արտաքին կապերի վարչություն	Ներդրումների և ռազմավարական նախագծերի կոմիտե Սանկտ Պետերբուրգի Արտաքին կապերի կոմիտե
3.3	Աջակցել Երևանի և Սանկտ Պետերբուրգի ֆիզդաստիարակչական-մարզական կազմակերպությունների միջև ուղիղ կապերի հաստատմանը: Առավել տարածում ունեցող մարզաձևերի գծով ընկերական հանդիպումների անցկացում:	2011-2014թթ.	Սպորտի և երիտասարդության հարցերով բաժին	Ֆիզդաստիարակության և սպորտի կոմիտե
3.4	Աջակցել Երևանի և Սանկտ Պետերբուրգի համերգային կոլեկտիվների, թատերական, բեմադրող խմբերի հյուրախաղերի և գեղարվեստական ցուցահանդեսների կազմակերպմանը	2011-2014թթ.	Մշակույթի վարչություն	Մշակույթի կոմիտե Սանկտ Պետերբուրգի Արտաքին կապերի կոմիտե

1	2	3	4	5
3.5	Մշակութային կապերի հարցերով աշխատանքային հանդիպումների կազմակերպում, ապահովել երկկողմանի մասնակցություն փառատոններում, տոնակատարությունների ժամանակ, մրցույթներում, մասսայական միջոցառումներին Երևանում և Սանկտ Պետերբուրգում	2010-2014թթ.	Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, Մշակույթի վարչություն	Մշակույթի կոմիտե Սանկտ Պետերբուրգի արտաքին կապերի կոմիտե
3.6	Աջակցել գեղարվեստական ստեղծագործությունների և գրականության ոլորտներում փոխանակմանը	2011-2014թթ.	Մշակույթի վարչություն	Մշակույթի կոմիտե Սանկտ Պետերբուրգի արտաքին կապերի կոմիտե
3.7	Աջակցել Երևանի և Սանկտ Պետերբուրգի ստեղծագործող միությունների, հասարակական հիմնադրամների, մշակույթի և արվեստի հիմնարկությունների միջև կապերի զարգացմանը, օգնություն ցուցաբերել Երևանի և Սանկտ Պետերբուրգի մշակույթի և արվեստի հիմնարկությունների միջև ստեղծագործ կապերի զարգացման գործում	2011-2014թթ.	Մշակույթի վարչություն	Մշակույթի կոմիտե Սանկտ Պետերբուրգի արտաքին կապերի կոմիտե
3.8	Աշխատանքային և տեղեկատվական փորձի փոխանակում առողջապահության և բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտներում, թեմատիկ կոնֆերանսների, սեմինարների, կլոր սեղանների անցկացում	2011-2014թթ.	Առողջապահության վարչություն, սոցիալական ապահովության վարչություն	Առողջապահության կոմիտե Սանկտ Պետերբուրգի սոցիալական քաղաքականության կոմիտե
3.9	Տեղեկատվության փոխանակում առողջապահական բնագավառում արդիական հարցերով կայանալիք քաղաքային սիմպոզիումների, գիտա-պրակտիկ կոնֆերանսների և համագումարների ոլորտում՝	2011-2014թթ.	Առողջապահության վարչություն, սոցիալական ապահովության	Առողջապահության կոմիտե

1	2	3	4	5
	ապահովելով համապատասխան մասնագետների մասնակցությունը		վարչություն	
3.10	Փորձի փոխանակման կազմակերպում բնակչության սոցիալական սպասարկման գործունեության ոլորտում, տեղեկատվական և նորարարական տեխնոլոգիաների կիրառում՝ սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակիչների հասցեների տվյալների բազայի ստեղծման և շահագործման նպատակով	2011-2014թթ.	Առողջապահության վարչություն, Սոցիալական ապահովության վարչություն	Սանկտ Պետերբուրգի սոցիալական քաղաքականության կոմիտե
3.11	Փորձի փոխանակում հաշմանդամների վերականգնողական և սոցիալական աջակցության բնագավառում	2011-2014թթ.	Առողջապահության վարչություն, Սոցիալական ապահովության վարչություն	Սանկտ Պետերբուրգի սոցիալական քաղաքականության կոմիտե
3.12	Երևանի և Սանկտ Պետերբուրգի սոցիալական զարգացման բնագավառում համագործակցության պոտենցիալ հնարավորությունների ուսումնասիրություն	2011-2014թթ.	Առողջապահության վարչություն, Սոցիալական ապահովության վարչություն	Սանկտ Պետերբուրգի սոցիալական քաղաքականության կոմիտե
3.13	Բնակչության սոցիալական պաշտպանության մարմինների, հասարակական կազմակերպությունների և ձեռնարկությունների ներկայացուցիչների մասնակցությունը <<Ավագ սերունդ>> միջազգային ֆորումի աշխատանքներում	2011-2014թթ. ապրիլ	Սոցիալական ապահովության վարչություն	Սանկտ Պետերբուրգի սոցիալական քաղաքականության կոմիտե
3.14	Բնակչության սոցիալական պաշտպանության մարմինների, հասարակական կազմակերպությունների և ձեռնարկությունների ներկայացուցիչների մասնակցությունը <<Սոցիալական Պետերբուրգ՝ նոր լուծումներ>> միջազգային ֆորումի աշխատանքներում	2011-2014թթ. հոկտեմբեր-նոյեմբեր	Սոցիալական ապահովության վարչություն	Սանկտ Պետերբուրգի սոցիալական քաղաքականության կոմիտե

1	2	3	4	5

Նշումներ.

Սույն Ծրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարանի և Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգի վարչակազմի միջև կնքված առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին 19.06.1997թ. համաձայնագրի թիվ 7 հոդվածի հիման վրա և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:

Սույն ծրագրի դրույթները չեն բացառում Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև երկկողմ պայմանավորվածության դեպքում այլ միջոցառումների և փոխանակումների անցկացումը, այն ոլորտներում, որոնք երկկողմ հետաքրքրություն են ներկայացնում:

Սույն ծրագրի դադարեցումը չի ազդում այն նախագծերի իրականացման վրա, որոնք սկսվել են այս ծրագրի դադարեցումից առաջ, ինչպես նաև պայմանագրերի, կնքված այս ծրագրի հիման վրա, եթե կողմերը համաձայնության չգան այլնի վերաբերյալ:

Սույն Ծրագրի գործունեության իրականացման համակարգումը դրվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության և Սանկտ Պետերբուրգի արտաքին կապերի կոմիտեի վրա:

Կատարված է Սանկտ Պետերբուրգում «7» հուլիսի 2011թ. երկու օրինակով